

ճառ գալսահան նոցին, եղ յաթոռ եպիսկոպոսութեան անուամբ միայն զՇ մուել զո՞ն ասորի վատթարագոյն քան զՇը զիշոյ, և զուրբն Աահակ եթող զնալ նստել յիւրում վեճակի, որում և հրամայեաց վարդապետել և ձեռնադրել զայնոսիկ՝ զորս Շ մուել հրամացեացէ:

Եւ վասն զի Ենատօլիսո զօրավար Յունաց լուհալ էր՝ եթէ ոչ կամին Հայք նըստուցանել զսուրբն Աահակ յաթոռ իւր ի բաժնին Պարսից, առաքեալ էր զարս խնդրել զնա ի Վառամայ ի մասն բաժնին Յունաց վասն նստելոյ անդ յաթոռ հայրագիտութեան, սորին աղազաւ և Վըսուամ պատուիրեաց սրբոյն մի՛ հակամիտիլ ի Յոյնս, այլ միալ ի հնազանդութեան:

Եկեալ նստեալ Շ մուել յաթոռ եպիսկոպոսապետութեան և առեալ ի ձեռքին զղործ աղահութեան Ծրբիշոյի, և առաւելեալ ևս քան զնա, յափշատակէր զվիճակ ո՛չ միայն վախճանեալ եպիսկոպոսացն, այլ կենդանեացն իսկ. և զբազումն ի նոցանէ յանիբառ ի հաղածեալ կողոպտէր զինչս և զստացուածս նոցա, և ի մեռանել ուրուք յեպիսկոպոսաց, չուայը թոյլ սրբոյն Աահակայ ձեռնադրել զայլ ոք ի տեղի նոցին, զի կարասցէ կորպել զինչս և զհասս վեճակի վախճանելոյն:

Ապա յետ հինդ ամաց աթոռակալութեան իւրոյ և անուանակրութեան կաթողիկոսութեան Հայոց, որովք չորաչար վարեաց զիշեանութիւն իւր, մեռանի անդէն յաշխարհին Հայոց յամին 436, զորոյ զանարժանութեան գործսն առա-

ջե առնէ՝ Մովսէս Կորենացի և Յովհանաթուղիկոսն՝ որպէս զրեցաւն:

(Յառաջանակէլէ)

ԱՌԵԼ ԱՐՔԵՊՈԽԱԿԱՊԱՅ

ԱՅՏՈՒԱԾԱԾՈՒԽՆՅԵՒՆ ԵՐԿՐՈՐԴԸՆԿԱՆ  
ԳՐՈՅ ՎՐԵՅ.

. . . Արօնագիտութեան վրայ աւելի խնամով հոգ տանելուն պէտքը հասկնալը դիւրին է. մեր հիմակուան քիչ մ' աւելի բարեկարգութեան միտում ունեցող զըսպրոցներուն \*) դասական կարեօր ուսմանց կարգը անցած է, օտար լեզուաց և մանաւանդ գաղղիքնի կրթութիւն: Եւս լեզուով գրուած զբքերը կարդալն՝ իրենց կրօնիցն անհմուտ եղող նորահաս ուսանողաց վտանգաւոր կրնան ըլլալ. վասն զի այն լեզուով չէ թէ միայն ուղղափառ հաւատոյ գէմ հերետիկոսական զբքեր, ոյլեւ բացայոյտ կերպով անաստուածութիւն և անհաւատութիւն սորվեցնող զբքեր ալ կը զանուին, և մարդ չկրնար գուշակել թէ տղայն ետքը տյապիսի զիրքեր կարդալու սէր պիտի ձգէ, կամ թէ լոկ արուեստից և արտաքին գիտութեանց զբքեր պիտի կարդայ:

Ենոր համար հարկ կը սեպեմբ պէտք եղած բաները ծանուցանել որոց որ անկ է իսպաշտուէ. որպէս զի իրենց խնամոցը յանձնեւած մատաղ մանկանց մաքուր

(\*) Ի Տաճկաստան Եւ այս յօդուածը գրուած է Կ. Պոլոց Հայոց Աղքային Կեղրուական Վարչութեան՝ ըստ Խորհրդյ Կրթական Յանձնաժողովյ կարգադրած զպրոցական հրահանգաց մէջ կրօնի համար արած կարեօր և արժանաւոր տընօրէնութեան և խնամոց առթիւ. Ծ. Խ. Բ. Ա. Բ.

միաբը մոլորական սկզբունքներէ աղատ պահեն, անոնց կրօնագիտութեան դասաւու եղողներուն մասնաւոր հրահանողներ տալով, որպէս զի հիմակուան ատենս մեր մէջ սողոսկելու մեծ ջանք ընող և մասսամբ իւիք յաջողութիւն դժած մոլորեցուցաց ըսելիքներն ու անոնց յարմարաւոր հերքումները սորվեցունեն. մենք ալ ներկայիւս անոնց օգնութիւն կընեմք:

Ըստզականները մեր սուրբ եկեղեցւոյն ամենէն վտանգաւոր թշնամիներն ըլլալով անոնց մոլորութեան զլեաւոր կետերը և անոնց պատշաճաւոր հերքումը զիտնալը՝ մեծ կարեռութիւն ունի: Վատանդին մեծութիւնն այն տեղն է ուր քարոզած մոլորութիւննին անանկ կը ցուցնեն՝ որպէս թէ Հայոց սուրբ եկեղեցին ի սկզբանէ հետանի անանկ ընդուներէ և ետքի ատենն երբ որ պապականաց հետ յարաբերութիւն ունեցան խաչակիրներուն արեւելք գալուն պատճառաւ, Հայերն ալ այն ատեն իրենց նախնի աւանդութիւնը ձգեցին և անոնց ըսածն ընդունեցին, և ասիկայ հաստատելու համար պէսպէս կերպեր ալ կը դրանեն և գործ կածեն՝ որով զիւրաւ կորսան և կը խարին պարզամիտ մարդիկը՝ զորս արդէն պապականք իրենցմէ խորշեցուցած ին՝ հերետիկոսութեան զբարատութիւն հոչակիլով վրանին, և ասով պապականք բողոքականաց չափ վտանգաւոր չեն: Ենոր համար նախ և առաջ ասոնց մոլորութիւնը յայտնելն և մեր սուրբ եկեղեցւոյն ալ նոյն մոլորութեանց ի սկզբանէ մինչեւ հիմայ հակառակ ըլլալը բաշտրել հարկ սեպեցինք:

Ըստզականք կըսեն՝ որ ամեն մարդ պարտական է իր հաւատաքը Վատանածաւ-

շունչ զրգէն սորվել, բայց Վատանածաւշունչ զրգերն որոնք ըլլալուն վրայ՝ մեղի հետ համաձայն չեն: Հին Կատակալանի զբքերէն Խմաստութեան և Տորիթայ և Վակարայեցւոց և Բարուքայ և Աթրաքայ զբքերն իրեմ Վատանածաշունչ չեն ձանչնար, և ընդունածներնուն մջէն ալ մեծկակ հաստատածներ դուրս նետած են, ինչպէս են Եսթերայ զբքէն քանի մը զլուխ բան, Դանիելի մարգարէութեան Ճագ և Ճագերորդ զլուխները, և երրորդ զլուխիները, որ կը ամեն օր Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ մջ կարգացուած Հայոցի փոխը: Ասոնց համար կըսեն՝ որ հրեից Վատանածաշնչն միջ չը կենալուն համար՝ նախնի եկեղեցւոյ հայրապետներն և ժողովներն ընդունած չեն, 1546 թուին պապականներուն Դըրբիսենդինու ժողովքը սուրբ գրոց կարգն առաւ, Հայերն ալ առաջ չեն ընդուներ՝ ետքերն սկսեցին ընդունել:

Վայ վաստերս պատմական ըլլալով՝ ասոնց վերաբերեալ պաամութեան անհմատ եղողներուն միտքը զիւրաւ կըզբաւեն. բայց քննութեան առնուելու ըլլան նէ զիւրաւ կը ցնդին:

Վաաջին նկատելիք բանը սա է որ՝ ուրիշ բան է չին կտակարանի զբքերուն միջ հրեից ընդունած զբքերը՝ զորս քրիստոնեայք ալ կընդունին՝ և սուրբ գրոց կարգը մատած ըլլալուն համար՝ Կատակալան կըսուին՝ քրիստոնէական կեղեցւոյ ընդունածներէն՝ որ Երանքարդականն կըսուին՝ զատ ցուցնելը, ուրիշ բան է՝ նախնականները իրեմ հարազարարականունները մերժելը:

Կախնի եկեղեցւոյ ժամանակն այս ընտարութիւնս ընելը կարևոր էր, վասն զի այն առանք եկեղեցւոյ հայրերը հրեհց մոլորութեանց դէմ ալ կը գրէին և անոնց սպասած Մեսիայն արդէն եկած ըլլալը՝ սուրբ գրոց մարգարէութիւններէն հասատել կուղէին, անոր համար պէտք էր չըկեց ընդունած գրքերը ձանջնալ, որպէս զի անոնց ընդունած մէկ տեղաց մը վկայութիւն բերած գտնուած ըլլալով ծաղրելի չըլլան։ Այս նպատակս ունէր Արքիկիոյ Մելիտոս եպիսկոպոսին ցանկը, զոր Եւսակի կեսարացին մեզի հասուցած է, և այս ցանկս յօրինուելուն պատմութիւնն այսպէս կդանիմք այս հեղինակիս եկեղեցական պատմութեանը մէջ (Գ. Եւ Պ. Ք. 26)։ — Ոնեսիոս անուն մէկը՝ զոր Մելիտոս եպիսկոպոսը եղբայր կանուանէ, ջերմուանդ և հոգւոյ փրկութեան նախանձախնդիր ըլլալով՝ Տեառն մերոյ վըրայօք Մովսիսի հինգ գրոց և մարգարէութեանց մէջ գտնուած խօսքերը առանձին քովին ունենալ ուզեց, և ասոր համար Մելիտոս եպիսկոպոսին աղաչեց՝ որ այս գրքերն որո՞ւք ըլլալն իրեն իմացունէ։

Մելիտոս այս գրքերն սառւգելու և ըստ այնմ տեղեկութիւն տալու համար Արքիկիէն ելաւ Երուսաղէմ գնաց, անկէց ետ դարձած ատենը՝ իրմէ ուզուած ցանկը շինեց, և Ոնեսիմոսի ուզած վկայութիւններն ալ անոնցմէ ժողվելով՝ առանձին գիրք մը շինեց վեց մասն բաժնուած։

Եհա Մելիտոսի ասանկ ցանկ մը շինելուն պատճառն այս է, և ասկէց միայն այն կը հասկցուի՝ թէ անոր ժամանակը հրէաները որ գիրքը իրրե Աստուածաշունչ կընդունէին։

Եւ ասկէց զատ՝ այն ալ կը հասկցուի՝ որ այն ատենը քրիստոնէական եկեղեցին՝ Վրիսառոսի Տեառն մերոյ աշխարհը զալէն առաջ գրուած անանկ գրքեր ալ իրը և Աստուածաշունչ կընդունէր՝ որ հրեհց Մելիտոս Եպիսկոպոսը կամ հարկ մը չէր ունենար այս գրքերս սառւգելու համար մինչեւ Երուսաղէմ երթալ, որ Աարդիւկէն բաւական հեռու է, կամ ըսել հարկ կը լսայ՝ որ ոչ միայն Մելիտոս եպիսկոպոս ինք չէր գիտէր թէ որ գիրք ծշմարտապէս են, այլ և մերձակայ վիճակներուն եպիսկոպոսներն ալ չէին գիտեր, որոց կարգը կը գտնուի յանուանէ մեզի ծանօթներէն՝ սուրբն Պօղբկարպոս, որ սրբոյն Յովհաննու աւետարանչին աշակերտն էր, և Աարդիկէի մօտ Օմիւոսին քաղաքին եպիսկոպոսն էր։ Թէ որ Մելիտոս եպիսկոպոսն Աստուածաշունչ գրքերն որո՞նք ըլլալը չէր գիտէր, որ հաւատալու բան չէ, կը ընար կամ գրով կամ անձամբ երթալով անոնց մէկէն սառւգել, և ոչ թէ մինչեւ Երուսաղէմ երթալ և հրէաներուն ոարբիներէն սորվել։

Երկրորդականոն գրքերը մերժելու զօրաւոր փաստ մը գտած կը կարծեն բոլուքականներն այն՝ որ Արոգինէս անուանի իմաստուն վարդապետը այս գրքերս չիւձանջնար, և իր Վեցիջեան և Աւթիջեան Աստուածաշունչերուն մէջ չէ առեր։ Այս Աստուածաշունչերն ինչ ըլլալը գիտցողը այս փաստիս զօրութիւնն ալ գիւրաւ կհասկնայ։ Արոգինէս Աստուածաշունչին թարգմանութիւնները Երրայական բնագրին հետ բազգատելու ձեռք զարնելով՝ իր աշխատութիւնը առաջ վեց էջ բաժնեց, առաջին էջը երբայիցերէն

բնագիրը դրաւ՝ երրայեցւոց զրով. երկ-  
րորդը՝ նոյն բնագիրը յունաց զրով. եր-  
րորդ և չորրորդ և հինգերորդ և վիցերորդ  
էջերն Խօթանասնից և Եկիւղասայ և Ախ-  
մաքոսի և Թէոդիտոնի յունարէն թարգ-  
մանութիւնները և այս եղաւ վիցիջեան։  
**Ետքը ըրած ճանապարհորդութիւննե-**  
րուն ատենը երկու Յունարէն թարգմա-  
նութիւններ ալ գտնալով՝ մէկն Աշրկով  
և միւսն ի Նիկոպօլիս, որոց թարգմանիչ ։  
ները անյայտ էին, ասոնք ալ առաջիննե-  
րուն վրայ աւելցուց և տսկեց ձեւացաւ  
Աւթիջեան։ Ասոնց մէջ չէր պարունակուէր  
երրայեցւոց Աստուածաշունչին մէջ չգտ-  
նուած կտորը. վասնզի հրեից լեզուով զը-  
րուածը չկար, և Որոգինէս հրեից լեզուով  
բնագրին հետյունարէն թարգմանութիւնը  
պիտի բաղդատէր, ուստի բաղդատութեան  
մէկ ծայրը չգտնուած բան մը բաղդատե-  
լիաց կարգէն դուրս կը մնար բնականապէս։

Բայց արդեօք Որոգինէս ինքն այս զր-  
քերս իրրե Աստուածաշունչ կը նդուէր թէ  
չէ, հետեւեալ պատմութենէն կիմացուի։  
Ենգամ մը այս իմաստունը ճանապարհոր-  
դութեան ատենը Պաղեստին անցնելով՝  
Բասոս անուն մէկի մը հետ հաւատալեաց  
վիճաբանութեան բռնուեցաւ, և իր խոս-  
քին հաստատութեան համար Դանիէլի  
մարգարէութեան ՃՎ զլուխէն վկայու-  
թիւն բերաւ, և վերը նշանակած եմք՝ որ  
այս զլուխս Երկրորդական զրոց կարգն էր։  
Վիճաբանութեան ներկայ գանուեցաւ  
Յուլիոս - Վիժիկանոս իմաստունը. որ ա-  
սոր այն վկայութիւնը բերելուն չհածեցաւ՝  
Երկրորդականոն զրքերէն հաւատալեաց  
վրայօք վկայութիւն շառնուիր ըսելով, որ  
միւսուի այնպէս էր՝ բայց միայն ՃՎէից

հետ վէճ եղած ատենը, որ այս զրքերս  
չէին ընդուներ։ Իսկ Բասոս կերեկ՝ որ  
կը նդունէր, վասն զի Որոգինէս անանկ  
տիմոր վիճաբան մը չէր՝ որ կամ իրեն  
կամ զիմացինին չընդունած զրքին խօս-  
քովը հաւատոյ յօդուած մը հաստատե-  
լու աշխատի։

Վիժիկանոս վիճաբանութեան ատենն  
իր գժգոհութիւնը չը յայտնեց, բայց  
ետքը այս բանիս վրայօք նամակ մը զրեց  
և Որոգինէսի զրկեց, որ ճանապարհոր-  
դութիւնը շարունակելու հարկին մէջ  
ըլլալով՝ Նիկոմիդա հասած ատենը ժա-  
մանակ ունեցաւ պատասխան զրելու։ Այս  
պատասխանս մինչև հիմայ կը կենայ, և  
ասոր մէջ հետեւեալ նշանաւոր խօսքը  
զրած է։ — Զգուշանամք որ ընդհանրա-  
պէս հիկեղեցւոյ մէջ ընդունելի եղած  
զրքերը կամ տղիտութեամբ կամ անխո-  
հեմութեամբ չհերքեմք, և մեր եղբարցը  
ձևոքը գանուած սուրբ զրքերը ձեռքեր-  
նէն ձգել տալու համար նոր օրէնք չհաս-  
տատենք, և չերթանք Ճրեաներուն շո-  
ղոքորդենք՝ որ մեզի մաքուր զրքեր տան,  
որոյ մէջ բնաւ առասպել խառնուած  
ըլլայ. քանզի Աստուածային Կախախ-  
նամութիւնը՝ որ սուրբ զրքերն Երկեղե-  
ցւոյ յանձնելով՝ անոր կատարեալ շինու-  
թիւնը հոգալ ուղեց, արդեօք Յիսուսի  
Քրիստոսի մահուան պէս մեծ գնով գնած  
մարդոցը համար մասնաւոր խնամք չէր  
տանէր. արդեօք նոյն ինքն Աստուած չէ,  
որ սուրբ զրոց մէջ կըսէ, « մի փոխեր  
զահմանս յաւիտենից՝ զորս եղին հարք  
քո», և Յայտնի կը ցուցնեն այս խօսքերս՝  
որ Որոգինէս իր ժամանակը ինչ զիրք որ  
հիկեղեցւոյ ընդունելի զտած էր՝ ամենն ալ

կընդունեք և անսոց մէջ անանինեք կա-  
մին՝ որ չըեանեքուն անընդունելի եին:

Առենք այս տեղս ընդհանուր եկեղեցին  
բաղկացնող իւրաքանչիւր մասնաւոր ե-  
կեղեցեաց վրայ մի ըստ միոջէ ըսելու կամք  
չունիմք. յատկապէս մեր Եսաքելական  
Ա. Եկեղեցւոյ վրայ պիտի խօսիմք, և ո-  
րովհետեւ Ա. Կուսաւորիչ Հայրն մեր  
քըստոնէական հաւատոյ վարժութիւնը  
Յունաց մէջ առաւ և անով մեր նախ-  
նիքը վարժեց, մեր զրիլիքներէն կիմացուի  
չորրորդ դարուն մէջ և անկեց առաջ և  
ետքը՝ Յունաց եկեղեցւոյն հաւատքը  
Իսկ անոր վրայ՝ որ կըսեն բողոքականք՝  
թէ Յոյները . . . . Երկրորդա-  
կանոն զբքերը Եստուածտունչի կարգը  
չեն ընդունիր, որովհետեւ ասիկայ ներ-  
կայ ժամանակիս Յունական եկեղեցւոյն  
վերաբերեալ բան մ' է, Հայաստանեացց  
Ա. Եկեղեցւոյ հայրապետաց և վարդա-  
պետաց վկայութիւնը տեսնելնէս ետքը՝  
ասոնց վրայ ար կըսոսիմք:

g. s. u. g. l. n. b. v. d.

ՊԱՏՄԱԿԱՆ

ԵԿԱՏԵՐԻՆԱԿԱՐ

(Հ-Ե-Ր-Ե-Ւ-Ց-Ե-Ր-Ե-Ւ-Ց-Ե-Ր-Ե-Ւ-Ց)

Խոկ անդ ի Ա. Գյորիգոր, որ յԵռապաշ  
րին, կաթուղիկոսարքան շինելու կամ ԱՌ-  
Նաստան պարսպիլու համար պատմիչք  
մէկմէկէ առնլով, կվկային՝ որ “Երասէս  
Գրգ. Ը ինոզն ասացեալ Կաթուղիկոս,  
զոռւրբ Գյորիգոր յանուն Երկնաւոր զը-  
ւարթնոց կառուցանելէն եաքը, շուրջա-  
նակի պարսպեց զայն, և մենաստանի մէջ  
կանգնեց ոչ միայն իւր համար յարկս  
բնակութեան կոփածոյ քարով, այլ և  
“ կարգեալ կացուցանէր ինմա, կդրէ  
պատմաբանն, ամբոխութիւնս երդումար-  
դաց ըստ պայմանի քաղաքականաց . . .  
ըստ որում Դմբայ և Երտաշատ քաղա-  
քաց ձանապարհը ընդ այն կանցանէր:

Ուստի Կասաղ գետէն ջուր բերելով  
մինչև անդ, զրիթէ չորս ժամ հեռաւո-  
րութենէ, Եռապարի բոլոր շրջակայ ա-  
ւազուտ դաշտավայրը հերկելու դիւրա-  
ցրուց, այգի և բուրաստան անկեց, որոց  
քարաշոր հիմունքը գեռ ևս կնշմարուին  
տեղ տեղ գետնի հաւասարութեան վրայ  
Եռապարի հիւսիսակողմը մերձ ի Կաւ-  
թառաձոր տեղին:

— Վասաղ գետ, ինչպէս յայտնի է  
Վաղարշապատայ պատմութենէն եք. 39.  
‘Ակդ գաւառէն կսկզբնաւորի, Երայի լե-  
րին արևմտեան կողմէն անցանելով, կը  
մանի Երագածոտն գաւառ Ազգմուսա-  
վանքի խորաձորը, անտի զառ ի վայր